

**Զբաղվածության կարգավորման
ամենամյա պետական
ծրագրեր**

www.employment.am

Զբաղվածության աջակցման պետական ծրագրեր

Գործազուրկներին ուղղված

Մասնագիտական ուսուցում

Աշխատանքային պրակտիկա

Այլ վայր աշխատանքի տեղավորման աջակցություն

Աշխատանքի տոնավաճառ

Վարձատրվող հասարակական աշխատանքներ

Անմրցունակ անձանց ուղղված

Միանվագ փոխհատուցում

Աշխատատեղի հարմարեցում

Փոքր բիզնեսի աջակցություն

Գյուղացիական տնտեսությունների աջակցություն

Աշխատավարձի մասնակի փոխհատուցում

Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում

Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում

Մասնագիտական ուսուցում

Նպատակը՝ աջակցել
ունկնդրին ձեռք բերել
աշխատաշուկայի
պահանջներին
համապատասխան նոր
կարողություններ ու
հմտություններ:

Տևողությունը՝ մինչև 5 ամիս:



Ուսուցման ամբողջ
ժամանակահատվածի
ընթացքում ունկնդրին
վճարվում է կրթաթոշակ՝
նվազագույն ամսական
աշխատավարձի 50%-
ի չափով

Այլ վայր աշխատանքի գործուղում

Նպատակը՝

մարզերում մասնավորապես,
գյուղական բնակավայրերում և
սահմանամերձ
տարածաշրջաններում
շարունակաբար չլրացվող
թափուր աշխատատեղերի
համալրումն է:

Այլ վայրում աշխատանքի
տեղավորումը տարածքային կենտրոնի
առաջարկությամբ գործազուրկի՝
բնակության վայրից առնվազն 30
կիլոմետր հեռավորությամբ
բնակավայրում աշխատանքի
տեղավորումն է:



Գործազուրկը ծրագրում
կարող է ընդգրկվել
առնվազն երկու տարի
ժամկետով:

www.employment.am

Աշխատանքային պրակտիկայի կազմակերպում

Նպատակը՝ աջակցել առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկին՝ իր մասնա-գի-տա-կան որակավորմանը համապատասխան մաս-նա-գիտական աշխատանքային փորձ ձեռք բերելուն:



- ✓ Ծրագրի իրականացման 3 ամիսների ընթացքում շահառուին վճարվում է աշխատավարձ՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով:
- ✓ Գործատուին գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոց. վճարը փոխհատուցելու համար:
- ✓ Գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին ամսական կտրվածքով վճարվում է գումար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

Աշխատանքի տոնավաճառ

Նպատակը՝ աջակցել
աշխատանք փնտրողին
գտնելու աշխատանք, իսկ
գործատուին՝ համալրելու
թափուր աշխատատեղերը՝
միաժամանակ մեծ թվով
գործատուների և
աշխատանք փնտրողների
հանդիպում ապահովելու
ճանապարհով:



2014թ.



2013թ.



2012



2015



Աշխատաշուկայում անմրցունակ անձինք

- անձն ունի հաշմանդամություն կամ «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ
- անձի ընտանիքն ստանում է ընտանեկան կամ սոցիալական նպաստ.
- անձը 16-30 տարիքային խմբում է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.
- անձը 31-63 տարիքային խմբում է և մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.
- անձը վերադարձել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից ու վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում.

- անձը վերադարձել է ազատագրկման վայրերից և վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում
- անձը թրաֆիքինգի զոհ է
- անձը փախստական է
- անձը բնակվում է կամ սահմանամերձ կամ լեռնային կամ բարձրլեռնային վայրերում.
- անձն առնվազն 90 օր անընդմեջ գտնվել է արտերկրում և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված.
- անձը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ է.
- նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում ուղղորդված անձ է.
- անձը Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) է.
- անձը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող է:

Աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին

Նպատակը՝

աշխատավարձի մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորմանը:

Ծրագրի շահառուներն են ազատագրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անմրցունակ անձինք

Հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար **մեկ տարի** ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

Ուղեկցողի կարիք ունեցող անձանց տրվում է դրամական օգնություն նվազագույն ամսական աշխատավարձի **50 տոկոսի** չափով:

www.employment.am

Միանվագ փոխհատուցում

Նպատակը՝

աշխատաշուկայում
անմրցունակ անձանց
աշխատանքային
ունակությունների և
կարողությունների՝
աշխատանքի վայրում
ձեռքբերման
հնարավորությունների
ընձեռնման միջոցով՝ կայուն
գրադվածության
ապահովումը:



Անմրցունակ անձանց աշխատանքային
ունակությունների և կարողությունների ձեռքբերման
համար գործատուին տրամադրվում է միանվագ
փոխհատուցում՝ 50.0 հազ. դրամից մինչև 200.0 հազ.
դրամի չափով

Աշխատատեղի հարմարեցում

Նպատակն է՝ աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով՝ հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը:

Մեկ անձի համար
գործատուին
փոխհատուցվող գումարի
առավելագույն չափը
հինգ հարյուր հազար
դրամ է:

Փոխհատուցվում են՝ աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաների, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը:

www.employment.am

Ենթածրագիր 1՝ Բիզնեսի աջակցություն

Նպատակը՝
աշխատաշուկայում
անմրցունակ անձանց
փոքր ձեռնարկատիրական
գործու–նեության
իրականացման և
ինքնագրադվածու–թյան
խթանման համար
աջակցության
տրամադրումը և լրացուցիչ
աշխատատեղերի
ստեղծումը:

Ծրագրի շրջանակներում
տրամադրվող
աջակցության
առավելագույն արժեքը
1,350.0 հազար դրամ:
Ծրագրի տևողությունը 2
տարի է:



Ենթաճրագիր 2՝ Աշխատաշուկայում
անմրցունակ անձանց
անասնապահությանը
(տավարաբուծությանը,
ոչխարաբուծությանը, խոզաբուծությանը,
այծաբուծությանը, թռչնաբուծությանը)
զբաղվելու համար աջակցության
տրամադրում



Ծրագրի շրջանակներում
տրամադրվող
աջակցության
առավելագույն արժեքը
1,200.0 հազար դրամ:
Ծրագրի տևողությունը 2
տարի է:

Մինչև երեխայի երկու տարին լրանալը երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցություն

Ծրագրի շահառուները.

տարածքային կենտրոններում հաշվառված, **մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող** աշխատանք փնտրող անձինք, ովքեր մինչև երեխայի երկու տարին լրանալը վերադառնում են աշխատանքի:



Ծրագրի ընթացքում **յուրաքանչյուր տարի ոչ ավելի, քան 11 ամիս, շահառուին մինչև 2 տարեկան յուրաքանչյուր երեխայի խնամք կազմակերպելու համար վճարվում է գումար՝ ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ամսական վարձատրության 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափը:**

Մայրերի համար մասնագիտական ուսուցման կազմակերպում

Շահառուները.

- Տարածքային կենտրոնում հաշվառված աշխատաշուկայում անմրցունակ անձ՝
- Մասնագիտություն չունեցող մայրերի

Ծրագրի ընթացքում վճարվում է.

- Ծրագրում ընդգրկված անձանց վճարվում է կրթաթոշակ՝ նվազագույն աշխատավարձի չափով:
- Գործատուի մոտ ուսուցանող մասնագետին՝ հավելավճար՝ նրա նախորդ տարվա ամսական աշխատավարձի 20%-ի չափով:
- Գործատուին միանվագ վճարվում է 30.000 դրամ նյութական ծախսերը հոգալու համար:

Տևողությունը՝ մինչև 6 ամիս է:

www.employment.am

Գյուղացիական տնտեսություններին աջակցություն

Նպատակը՝

գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն է և նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ապահովումը:

Ծրագրի առավելագույն տևողությունն է 180 օր:

Ծրագրի արժեքը չի կարող ցածր լինել 50 հազ. դրամից, և գերազանցել 350 հազ. դրամը:



Վարձատրվող հասարակական աշխատանքներ

- Նպատակն է՝ գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման միջոցով հանրապետությունում սոցիալական լարվածության մեղմումը և իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով համայնքներին աջակցելը:
- Աշխատանքներում ընդգրկված գործազուրկին՝ օժանդակ աշխատանքներ կատարելու համար մեկ աշխատանքային օրվա համար վճարվում է **հինգ հազ.** դրամ՝ ներառյալ հարկերը
- Աշխատանքների կազմակերպման **առավելագույն տևողությունը երեք ամիս է:**




Իրավիճակից բխող արագ արձագանքող ծրագրեր

- Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովում
- Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում
- Հանրապետության երեք մարզերում (Վայոց ձոր, Սյունիք, Գեղարքունիք) թվով 70 ԱՀ քաղաքացի ընդգրկվել է միջազգային կազմակերպության (UNDP) ֆինանսավորմամբ իրականացվող աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագրում:

**ՄՍԾ ԶԲԱՂՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ**

**Աշխատանք
փնտրողներ**



**Թափուր
աշխատատեղեր**



Համադրում



www.employment.am

ՄՍԾ տարածքային կենտրոնում հաշվառվելու համար փաստաթղթերի ցանկ

- Անձնագիր կամ նույնականացման քարտ (ՆՔ),
- ՆՔ չունենալու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ կամ սոց. ապահովության քարտ,
- Կրթությունը, մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթեր,
- Աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային գործունեությունը հաստատող այլ փաստաթղթեր,
- Զինվորական գրքույկ, եթե առկա է,
- Գրավոր դիմում՝ նշելով հետադարձ ծանուցման հասցեն և իր հետ կապ հաստատելու այլ տեղեկություններ (հեռախոսահամար, բջջային և/կամ էլ. փոստի հասցե):
- Հաշմանդամություն ունեցող անձինք՝ հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագիր:



Շնորհակալություն

Արևիկ Ստեփանյան
ՄՍԾ Չբաղվածության ապահովման և
աշխատանքային ներուժի զարգացման վարչության
Չբաղվածության ծրագրերի համակարգման բաժին

Հեռ. +374 60 65-27-11
+374 60 65-27-12
+374 55 30-26-17
+374 55 30-26-18

www.employment.am